AMCA

Արբիտրաժի և
հաշտարարության
հայաստանյան կենտրոնի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Առաջին խմբագրությամբ, 2023

Երևան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամը (այսուհետ՝ «Կենտրոն») հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սույն կանոնադրությամբ նախատեսված հանրօգուտ նպատակներ:
2. Կենտրոնի անվանումն է՝
   1) հայերեն լրիվ՝ «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամ.
   2) ռուսերեն լրիվ՝ Фонд “Арбитражный и медиационный центр Армении”.
   3) անգլերեն լրիվ՝ "Arbitration and Mediation Center of Armenia" Foundation.
   4) հայերեն կրճատ՝ «ԱՀՀԿ» հիմնադրամ.
   5) ռուսերեն կրճատ՝ фонд «АМЦА».
   6) անգլերեն կրճատ՝ “AMCA” Foundation:
3. Կենտրոնը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Կենտրոնի գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0023, Արշակունյաց պող. 51, տարածք 47:
4. Կենտրոնի հիմնադիրներն են՝
   1) «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամը՝ հիմնադրված Հայաստանի Հանրապետությունում, պետական գրանցման համար՝ 222.160.930235, գտնվելու վայրի հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 3/8.

2) «Հայ իրավաբանական միություն» Կալիֆորնիայի շահույթ չհետապնդող հանրային շահ հետապնդող կորպորացիան՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգում գրանցված կազմակերպությունը (գրանցման վկայականի համար 1472207, որը գործունեություն է իրականացնում Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կալիֆորնիա նահանգ 91201, ք. Գլենդել, Ալեն փողոտա 1762 հասցեում).

3) «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» (ՀԲԸՄ)՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Դելավեր Նահանգում գրանցված կազմակերպությունը (գրանցման վկայականի համար 486313, վավերացված 11.03.2020թ.-ին, որը գործունեություն է իրականացնում Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք նահանգ 10022-1112, ք. Նյու Յորք, 59-րդ (արևելք) փողոց 55 հասցեում):

5. Կենտրոնը կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, անգլերեն և ռուսերեն գրառումներով), դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացման այլ միջոցներ:

6. Կենտրոնի շահառուներն են ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց օգտին Կենտրոնի կողմից մատուցվում կամ կարող են մատուցվել ծառայություններ, կատարվում կամ կարող են կատարվել որոշակի վճարումներ, ինչպես նաև նրանց փոխանցվում կամ կարող են փոխանցվել Կենտրոնի գույքի որոշ մասը: Մասնավորապես, Կենտրոնի շահառուների խմբերն են.

1) Կենտրոնի՝ որպես մշտապես գործող արբիտրաժային հաստատության և հաշտարարական հաստատության՝ վեճերի լուծման ծառայություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք.

2) Կենտրոնի կողմից կազմակերպվող վերապատրաստման և կրթական բնույթի այլ ծառայություններից օգտվող անձինք.

3) Կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումների մասնակից հանդիսացող անձինք.

4) Ցանկացած կազմակերպություն և ֆիզիկական անձ, ով որևէ կերպ օգտվում է Կենտրոնի որևէ ծառայությունից:

7. Կենտրոնը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Տարբեր աղբյուրներից, ինչպես նաև իր տնտեսական գործունեությունից ստացված միջոցներն օգտագործվում են միայն սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. Կենտրոնի նպատակներն են՝

1) որպես մշտապես գործող արբիտրաժային հաստատություն հանդես գալը.

2) միջազգային և լոկալ արբիտրաժային վարույթների իրականացման ապահովումը՝ միջազգայնորեն ընդունված, անկախ, անկողմնակալ և արդյունավետ գործընթացների և մեխանիզմների միջոցով, այդ թվում՝ Կենտրոնին վերապահվող վեճերի նկատմամբ կիրառելի արբիտրաժային և հաշտարարության կանոնների և ընթացակարգերի սահմանման միջոցով.

3) վեճերի լուծման այլընտրանքային այլ մեխանիզմների (հաշտարարություն՝ որպես հաշտարարական հաստատություն հանդես գալով, բանակցություններ և այլն) ծառայությունների մատուցման ապահովումը.

4) Հայաստանի Հանրապետությունում վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների, այդ թվում՝ արբիտրաժի զարգացմանը, տարածմանը և կիրառմանը, դրանց նկատմամբ վստահության բարձրացմանը և հանրության շրջանակներում ու գործարար համայնքում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կիրառման խրախուսմանը, այդ ոլորտում օրենսդրության զարգացմանը և կատարելագործմանը նպաստելը՝ դրանով իսկ նպաստելով նաև արդարադատության մատչելիության և արդյունավետության բարձրացմանը և դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը.

5) վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների վերաբերյալ կրթական ծրագրերի (կոնֆերանսներ, քննարկումներ, դատախաղ-մրցույթներ,

հրատարակումներ և նմանօրինակ այլ միջոցառումներ) կազմակերպումը, իրականացումը և ֆինանսավորումը, որոնք նախատեսված են՝

ա) հասարակական և գործարար համայնքի համար,

բ) կրթական հաստատությունների համար,

գ) մասնագիտական կազմակերպությունների համար.

6) Հայաստանի Հանրապետությունում արբիտրաժի և վեճերի լուծման այլընտրանքային այլ մեխանիզմների զարգացմանն ուղղված միջազգային համագործակցությունների հաստատումը, օտարերկրյա և միջազգային կազմակերպություններին անդամակցությունը, նշված ոլորտներում Հայաստանի Հանրապետության և տեղացի մասնագետների ներգրավվածության բարձրացումը միջազգային ասպարեզում.

7) Հայաստանի Հանրապետության գործարար և ներդրումային (ներառյալ՝ օտարերկրյա ներդրումների) միջավայրի բարելավմանը, ներդրումների և գործարար հարաբերությունների իրավական պաշտպանության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը անուղղակիորեն նպաստելը:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

9. Կենտրոնը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, որը համապատասխանում և ծառայում է Կենտրոնի նպատակներին:

10. Կենտրոնը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

11. Սույն կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին համապատասխան՝ Կենտրոնը կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով.

1) իրավաբանական գործունեություն (այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ արբիտրաժի և վեճերի լուծման այլընտրանքային այլ մեխանիզմների միջոցով վեճերի լուծում, փաստաթղթերի պատրաստում, խորհրդատվություն),

2) խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում,

3) գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում,

4) մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում,

5) գրքերի, թերթերի, ամսագրերի, տեղեկագրերի, պարբերական հրատարակությունների հրատարակում և այլ հրատարակչական գործունեություն,

6) գովազդային գործունեություն,

7) սեփական և վարձակալած անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլ գործառնություններ,

8) գրասենյակային մեքենաների և սարքավորանքի, ներառյալ համակարգիչները, վարձույթ և լիզինգ.

9) վեհաժողովների կազմակերպում.

10) նեղ մասնագիտական գիտելիքների ձեռք բերման այլ դասընթացներ:

12. Կենտրոնը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ

13. Հիմնադիրների կողմից Կենտրոնին հանձնված գույքը Կենտրոնի սեփականությունն է և կարող է օգտագործվել միայն սույն կանոնադրությամբ սահմանված Կենտրոնի նպատակների իրականացման համար:

14. Կենտրոնը տիրապետում, օգտագործում ու տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

15. Կենտրոնը որպես սեփականություն կարող է ունենալ շարժական և անշարժ գույք, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

16. Կենտրոնի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) հիմնադիրների ներդրումները.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

3) դրամական մուտքերը պետական բյուջեից.

4) դրամաշնորհները.

5) Կենտրոնի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

6) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում).

7) օրենքով չարգելված այլ միջոցներ:

17. Կենտրոնի գործունեության ընթացքում ձեռք բերված ամբողջ գույքը, այդ թվում՝ ստացված եկամուտը, պետք է օգտագործվի Կենտրոնի կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:

18. Կենտրոնի տնօրենը Կենտրոնի ֆինանսական միջոցները կարող է օգտագործել Հոգաբարձուների խորհրդի կողմից տարեկան հաստատված բյուջեին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնի տնօրենը կարող է

դիմել Հոգաբարձուների խորհրդին՝ բյուջեում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու համար:

V. ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Սույն կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին համապատասխան՝ Կենտրոնը սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար իրավունք ունի իրականացնել օրենքով չարգելված գործողություններ:

20. Սույն կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին համապատասխան՝ Կենտրոնը իրավունք ունի ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ, ինչպես նաև ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

21. Կենտրոնը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.

2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ կամ հրապարակել.

4) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

VI. ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Կենտրոնի մարմիններն են՝

1) Հոգաբարձուների խորհուրդը.

2) Արբիտրաժային խորհուրդը.

3) Տնօրենը:

23. Կենտրոնի աշխատակազմը սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար, ինչպես նաև Կենտրոնի արբիտրաժային կամ հաշտարարության կանոններով նախատեսված դեպքերում գործում է որպես հաստատության քարտուղարություն, ապահովում է նաև վեճերի լուծման այլընտրանքային այլ մեխանիզմների քարտուղարության գործառույթների իրականացումը:

VII. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

24. Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 9 անդամից, որոնք նշանակվում են երեք տարի ժամկետով: Հոգաբարձուների խորհուրդը պետք է ունենա նախագահ, որին ընտրում են Հոգաբարձուների խորհրդի անդամները խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

25. Կենտրոնի Հոգաբարձուների խորհրդի անդամները (ներառյալ՝ Նախագահը) չեն համարվում Կենտրոնում պաշտոն զբաղեցնող անձ և իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Կենտրոնի Հոգաբարձուների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են Հոգաբարձուների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է Հոգաբարձուների խորհուրդը:

26. Հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամի կոչում շնորհում է Հոգաբարձուների խորհուրդը՝ իրավաբանական գործունեության կամ գիտության ոլորտում բարձր հեղինակություն վայելող անձանցից: Հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամները Հոգաբարձուների խորհրդի աշխատանքներին կարող են մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

27. Հոգաբարձուների խորհուրդը կազմված է հետևյալ կազմակերպությունների կողմից ներկայացված մեկական անդամներից.

1) «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամ.

2) «Հայ Իրավաբանական Միություն» Կալիֆորնիայի շահույթ չհետապնդող հանրային շահ հետապնդող կորպորացիա.

3) «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» հիմնադրամ.

4) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

5) «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ.

6) Կառուցապատողների շահերը պաշտպանող ոչ առևտրային կազմակերպություն (միություն).

7) Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների շահերը պաշտպանող ոչ առևտրային կազմակերպություն (միություն).

8) Հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունների շահերը պաշտպանող ոչ առևտրային կազմակերպություն (միություն).

9) Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կրթության, բարեփոխման կամ ինքնակարգավորման ոլորտում ներգրավված ոչ առևտրային կազմակերպություն:

28. Հոգաբարձուների խորհրդի անդամների առաջին կազմը ձևավորվում է Հիմնադիրների կողմից՝ միաձայն ընդունված որոշմամբ: Այնուամենայնիվ՝ Հիմնադիրները պետք է որպես Հոգաբարձուների խորհրդի անդամի թեկնածու դիտարկեն սույն կանոնադրության 27-րդ կետում նախատեսված կազմակերպությունների ներկայացրած թեկնածուներին: Այդ կապակցությամբ հիմնադիրները կարող են հարցում անել այդ կազմակերպություններին՝ Հոգաբարձուների խորհրդի անդամի թեկնածու առաջադրելու համար: Սույն կետով նախատեսված դեպքում, սույն կանոնադրության 27-րդ կետում նախատեսված որևէ կազմակերպության կողմից Հոգաբարձուների խորհրդի անդամի թեկնածու չներկայացնելու, հիմնադիրների կողմից թեկնածուին չնշանակելու կամ թեկնածուի նշանակման այլ անհնարինության դեպքում հիմնադիրները ընտրում են այլ թեկնածու՝ միաձայն ընդունված որոշմամբ:

29. Հոգաբարձուների խորհրդի երկրորդ և հաջորդ կազմերի ձևավորման դեպքում սույն կանոնադրության 27-րդ կետի 1-5-րդ ենթակետերում նախատեսված կազմակերպություններից ներկայացված Հոգաբարձուների խորհրդի անդամները նշանակվում են այդ կազմակերպության առաջադրմամբ: Սույն կետով նախատեսված դեպքում Հոգաբարձուների խորհրդի անդամների թեկնածուները պետք է առաջադրվեն սույն կանոնադրության 33-րդ կետով նախատեսված մարմիններին ծանուցելուց հետո ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում: Եթե սույն կետով նախատեսված ժամկետում սույն կանոնադրության 27-րդ կետի 1-5-րդ ենթակետերում նախատեսված կազմակերպությունները Հոգաբարձուների խորհրդի անդամի թեկնածու չեն առաջադրում, ապա Կենտրոնի հիմնադիրները նշանակում են այլ թեկնածու՝ միաձայն ընդունված որոշմամբ:

30. Հոգաբարձուների խորհրդի երկրորդ և հաջորդ կազմերի ձևավորման դեպքում սույն կանոնադրության 27-րդ կետի 6-9-րդ ենթակետերում նախատեսված կազմակերպությունները ներկայացնող Հոգաբարձուների խորհրդի անդամների առաջադրումները կատարվում են հետևյալ կերպ. Տնօրենը թափուր տեղ առաջանալու դեպքում տվյալ կազմակերպությունների համար հայտարարում է ժողովի անցկացման օր և ժամ, որով տվյալ ոլորտի կազմակերպությունները կարող են ներկայացնել գրավոր հայտ ժողովին մասնակցելու և ցանկության դեպքում նաև իրենց թեկնածուին առաջադրելու համար: Ժողովը պետք է անցկացվի թափուր տեղ առաջանալու մասին սույն կանոնադրության 33-րդ կետով նախատեսված մարմիններին ծանուցելուց հետո ոչ շուտ, քան 10 օրվա և ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում: Ժողովի տեղի ունենալու մասին հայտարարությունը տեղադրվում է Կենտրոնի կայքում և Տնօրենը կարող է նաև ծանուցումներ ուղարկել իրեն հայտնի կազմակերպությունների հասցեներով՝ ժողովի մասին ծանուցելու նպատակով: Ժողովում յուրաքանչյուր ոլորտը ներկայացնող կազմակերպությունները ժողովին մասնակցող կազմակերպությունների թեկնածուներից ընտրում են Հոգաբարձուների խորհրդի անդամի թեկնածու՝ յուրաքանչյուր կազմակերպությունը՝ մեկ ձայն սկզբունքով և ժողովին ներկաների ձայների մեծամասնությամբ: Եթե ժողովին մասնակցելու համար դիմել է կամ ժողովին մասնակցել է մեկ կազմակերպություն, ապա ընտրված է համարվում այդ կազմակերպության թեկնածուն: Եթե սույն կետով նախատեսված ժամկետում սույն կանոնադրության 27-րդ կետի 6-9-րդ ենթակետերում նախատեսված կազմակերպությունները Հոգաբարձուների խորհրդի անդամի թեկնածու չեն առաջադրում կամ առաջադրված թեկնածուն չի ընտրվում, ապա Կենտրոնի հիմնադիրները միաձայն նշանակում են Հոգաբարձուների խորհրդի անդամ սույն կանոնադրության 27-րդ կետի 6-9-րդ ենթակետերում նախատեսված կազմակերպություններից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սույն

կանոնադրության 27-րդ կետի 6-9-րդ ենթակետերում նշված ոլորտներում գործունեություն իրականացնող առանձին կազմակերպություններից:

31. Սույն կանոնադրության 29-30-րդ կետերի համաձայն առաջադրված (ընտրված) Հոգաբարձուների խորհրդի թեկնածուն նշանակվում է որպես Հոգաբարձուների խորհրդի անդամ հիմնադիրների միաձայն ընդունված որոշմամբ: Եթե հիմնադիրները Հոգաբարձուների խորհրդի առաջադրված (ընտրված) թեկնածուին չեն նշանակում որպես Հոգաբարձուների խորհրդի անդամ, ապա ծանուցում են համապատասխան կազմակերպությանը՝ կրկին թեկնածու առաջադրելու վերաբերյալ: Երկրորդ դեպքում հիմնադիրների կողմից միաձայն Հոգաբարձուների խորհրդի անդամ չնշանակվելու դեպքում հիմնադիրները նշանակում են Հոգաբարձուների խորհրդի անդամ իրենց հայեցողությամբ: Սույն կետով նախատեսված դեպքերում Հոգաբարձուների խորհրդի նոր անդամը նշանակվում է համապատասխանաբար սույն կանոնադրության 29-30-րդ կետերով նախատեսված ժամկետների ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում:

32. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունները դադարում են «Հիմնադրամների մասին» օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ լիազորությունների ժամկետը ավարտվելու դեպքում: Ընդ որում՝ Հոգաբարձուների խորհրդի անդամի կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով նրա լիազորությունները կարող են դադարեցվել:

33. Տնօրենը Հոգաբարձուների խորհրդի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում, իսկ լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում, դրանից 30 օր առաջ, տեղեկացնում է Կենտրոնի հիմնադիրներին, Հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած կամ առաջադրած անձանց, Արբիտրաժային խորհրդի անդամներին Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղը լրացնելու անհրաժեշտության մասին:

34. Հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Կենտրոնի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.

2) Կենտրոնի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) Կենտրոնի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Կենտրոնի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

4) Կենտրոնի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

5) Կենտրոնի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

6) Կենտրոնի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

7) Կենտրոնի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

9) Հոգաբարձուների խորհրդի նախագահի, Տնօրենի, Արբիտրաժային խորհրդի անդամների, Արբիտրաժային խորհրդի նախագահի և փոխնախագահի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

10) Արբիտրաժային խորհրդի քանակական կազմի սահմանումը և Արբիտրաժային խորհրդի ձևավորումը.

11) Կենտրոնի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

12) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

13) Կենտրոնի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

14) յուրաքանչյուր տարի հերթական նիստով Տնօրենի հաշվետվությունների լսումը.

15) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

16) Կենտրոնի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

17) Կենտրոնի կառուցվածքի հաստատումը.

18) Կենտրոնի հաստիքացուցակի հաստատումը.

19) Արբիտրաժային խորհրդի ներկայացմամբ կամ դրական եզրակացությամբ Կենտրոնի արբիտրաժային կանոնների հաստատումը, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, այն նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշումների ընդունումը.

20) Տնօրենի ներկայացմամբ Կենտրոնի հաշտարարության կանոնների հաստատումը, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, այն նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշումների ընդունումը.

21) օրենքով, կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Կենտրոնի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

35. Հոգաբարձուների խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Հոգաբարձուների խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել Հոգաբարձուների խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր՝ սույն կանոնադրության 34-րդ կետի 13-րդ ենթակետով նախատեսված, Կենտրոնի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրություն և այլն) իրականացման և նույն կետի 3-րդ, 4-րդ, 11-րդ և 12-րդ ենթակետերով նախատեսված հարցերի նախնական

քննարկման և դրանց վերաբերյալ հոգաբարձուների խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար.

2) գումարում է Հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

4) Տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5) Հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ՝ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.

6) ստորագրում է Հոգաբարձուների խորհրդի որոշումները:

36. Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կատարում է անդամներից մեկը, ում ընտրում են նիստին ներկա անդամները՝ ձայների մեծամասնությամբ:

37. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ Հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնադրությամբ:

38. Հոգաբարձուների խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են Հոգաբարձուների խորհրդի նախագահը և նիստի քարտուղարը:

39. Հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության և ազատման, Տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Կենտրոնի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են Հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

40. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է տարեկան 1 անգամ գումարվող հերթական նիստերի, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի հերթական նիստ գումարում է Հոգաբարձուների խորհրդի նախագահը՝ մինչև հաշվետու տարվա ավարտին հաջորդող տարվա ապրիլի 30-ը:

41. Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել Հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից՝ Հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով կամ Արբիտրաժային խորհրդի կամ Տնօրենի առաջարկով՝ համապատասխան պահանջը կամ առաջարկը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում Հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով Հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ համապատասխանաբար կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած Հոգաբարձուների խորհրդի անդամները՝ նույն օրակարգով: Հոգաբարձուների խորհրդի նախագահը իրավունք չունի Հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի ներկայացրած օրակարգում փոփոխություններ իրականացնել:

42. Հոգաբարձուների խորհրդի նիստի քարտուղարը ոչ պակաս քան Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստից 3 աշխատանքային օր առաջ Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստի օրակարգի և ժամկետի մասին գրավոր տեղեկացնում է Հոգաբարձուների խորհրդի անդամներին:

43. Եթե Հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է Հոգաբարձուների խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

44. Հոգաբարձուների խորհրդի անդամները կարող են նիստերին մասնակցել նաև ուղիղ հեռակապի միջոցով:

45. Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ նիստերը կարող են կազմակերպվել էլեկտրոնային հարցումների միջոցով՝ օգտվելով էլեկտրոնային հաղորդակցության միջոցներից: Այդ դեպքում Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստի օրակարգի շուրջ էլեկտրոնային քվեարկություն իրականացնելու միջոցով:

VIII. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

46. Արբիտրաժային խորհուրդը կազմված է ոչ պակաս, քան յոթ և ոչ ավել, քան տասնհինգ անդամներից: Արբիտրաժային խորհրդի անդամ կարող է ընտրվել գործունակ այն ֆիզիկական անձը, ով ունի առնվազն տասը տարվա իրավաբանի, արբիտրի կամ վեճերի լուծման ոլորտում մասնագիտական փորձ:

47. Արբիտրաժային խորհրդի անդամներին նշանակում է Հոգաբարձուների խորհուրդը՝ 4 տարի ժամկետով: Արբիտրաժային խորհրդի քանակական կազմի սահմանման և առաջին կազմի թեկնածուների վերաբերյալ առաջարկները Հոգաբարձուների խորհրդին են ներկայացնում միայն հիմնադիրները կամ Տնօրենը՝ Հոգաբարձուների խորհրդի կազմավորումից հետո երեք ամսվա ընթացքում:

48. Արբիտրաժային խորհրդի նախագահին և փոխնախագահին ընտրում է Հոգաբարձուների խորհուրդը՝ Արբիտրաժային խորհրդի անդամների առնվազն կեսից ավելին նշանակվելուց հետո: Արբիտրաժային խորհրդի նախագահը և փոխնախագահը պաշտոնավարում են մինչև իրենց՝ որպես Արբիտրաժային խորհրդի անդամի լիազորությունների դադարումը: Հոգաբարձուների խորհուրդը կարող է դադարեցնել Արբիտրաժային խորհրդի նախագահի կամ փոխնախագահի լիազորությունները՝ առանց Արբիտրաժային խորհրդի կազմից անձին հեռացնելու, եթե նրանք նման դիմում են ներկայացրել Հոգաբարձուների խորհրդին, ինչպես նաև, երբ Արբիտրաժային խորհրդի նախագահը կամ փոխնախագահը պատշաճ չեն կատարում իրենց գործառույթները:

49. Արբիտրաժային խորհրդի անդամի լիազորությունների դադարման դեպքում՝ անհապաղ, ինչպես նաև Արբիտրաժային խորհրդի անդամի լիազորությունների

ժամկետը ավարտվելուց առնվազն երկու ամիս առաջ Տնօրենը ծանուցում է Հոգաբարձուների խորհրդի անդամներին և Արբիտրաժային խորհրդի անդամներին:

50. Հոգաբարձուների խորհրդի քննարկմանը Արբիտրաժային խորհրդի անդամի թեկնածու կարող են առաջադրել Տնօրենը, Արբիտրաժային խորհրդի գործող անդամը կամ անդամները, ինչպես նաև Հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ՝ թափուր տեղի կամ Արբիտրաժային խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը ավարտվելու մասին Տնօրենի ծանուցումը ստանալուց 20 օրվա ընթացքում: Սույն կետում նշված անձանցից յուրաքանչյուրը կարող է մեկ թափուր տեղի համար ներկայացնել մեկ թեկնածու:

51. Արբիտրաժային խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու վերաբերյալ Հոգաբարձուների խորհրդի և Արբիտրաժային խորհրդի անդամներին ծանուցելուց հետո առավելագույնը 30 օրվա ընթացքում Տնօրենը նախաձեռնում է Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստի անցկացում՝ այդ մասին դիմելով Հոգաբարձուների խորհրդի նախագահին: Արբիտրաժային խորհրդի նոր անդամը պետք է ընտրվի նախորդ անդամի լիազորությունների դադարեցումից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում: Արբիտրաժային խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը ավարտվելու հիմքով Արբիտրաժային խորհրդի նոր անդամը պետք է ընտրվի Արբիտրաժային խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը ավարտվելուց առնվազն 5 օր առաջ, որի դեպքում նոր ընտրված անդամը իր լիազորությունները ստանձնում է նախորդ անդամի լիազորությունները դադարելուց հետո, իսկ եթե ընտրվել է նույն անձը, ապա նա համարվում է վերընտրված նոր ժամկետով: Սահմանված ժամկետում Արբիտրաժային խորհրդի անդամ չընտրվելու դեպքում, նախորդ անդամը շարունակում է պաշտոնավարել մինչև նոր անդամի ընտրությունը:

52. Արբիտրաժային խորհրդի անդամի լիազորությունները դադարում են հետևյալ դեպքերում.

1) Արբիտրաժային խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.

2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու, սույն կանոնադրությամբ, Հոգաբարձուների խորհրդի որոշումներով սահմանված պահանջները կամ սահմանափակումները խախտելու դեպքում՝ Հոգաբարձուների խորհրդի անդամների ձայների առնվազն 2/3-ով.

3) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.

5) նրա մահվան դեպքում:

53. Արբիտրաժային խորհուրդը՝

1) սահմանում է արբիտրների և քարտուղարությունն ապահովող անձանց վարքագծի կանոնները.

2) ընդունում է Արբիտրաժային խորհրդի գործունեության կարգը.

3) Կենտրոնի արբիտրաժային կանոններով սահմանված դեպքերում և կարգով հանդես է գալիս որպես նշանակող մարմին.

4) քննում է արբիտրների դեմ ներկայացված բացարկի դիմումներն ու որոշում է կայացնում արբիտրների բացարկի հարցերով, սահմանում է բացարկի քննության կարգը.

5) Կենտրոնի արբիտրաժային կանոններով նախատեսված դեպքերում և կարգով որոշում, հաստատում կամ փոփոխում է կոնկրետ արբիտրաժային գործի շրջանակներում արբիտրների վարձատրության չափերը.

6) իրականացնում է սույն կանոնադրությամբ, Կենտրոնի արբիտրաժային կանոններով, Արբիտրաժային խորհրդի գործունեության կարգով կամ Հոգաբարձուների խորհրդի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

54. Արբիտրաժային խորհրդի նախագահը՝

1) Տնօրենի աջակցությամբ կազմակերպում է Արբիտրաժային խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել Արբիտրաժային խորհրդի հանձնաժողովներ.

2) նախագահում է Արբիտրաժային խորհրդի նիստերը և ապահովում է Արբիտրաժային խորհրդի բնականոն գործունեությունը.

3) իրականացնում է Կենտրոնի արբիտրաժային կանոններով և Արբիտրաժային խորհրդի գործունեության կարգով նախատեսված այլ գործառույթներ:

55. Արբիտրաժային խորհրդի փոխնախագահը փոխարինում է նախագահին նրա բացակայության ժամանակ, իրականացնում է նախագահի կողմից վերապահված և Արբիտրաժային խորհրդի գործունեության կարգով նախատեսված այլ գործառույթներ:

56. Արբիտրաժային խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

57. Արբիտրաժային խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ամբողջ կազմով, բացառությամբ Կենտրոնի արբիտրաժային կանոններով լոկալ համարվող վեճերի, որոնց կապակցությամբ որոշումները Արբիտրաժային խորհուրդը կայացնում է Ազգային հանձնաժողովի կազմով, որը ձևավորվում է Արբիտրաժային խորհրդի նախագահի որոշմամբ՝ Արբիտրաժային խորհրդի գործունեության կարգին համապատասխան: Արբիտրաժային խորհրդի Ազգային հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել Արբիտրաժային խորհրդի ոչ պակաս քան երեք անդամներ: Արբիտրաժային խորհրդի Ազգային հանձնաժողովի նիստերը նախագահում է դրա՝ Արբիտրաժային խորհրդի նախագահի որոշմամբ նշանակված անդամը՝ Ազգային հանձնաժողովի առնչությամբ իրականացնելով սույն կանոնադրության 53-րդ կետով նախատեսված գործառույթները: Արբիտրաժային խորհրդի Ազգային հանձնաժողովի նախագահը պաշտոնավարում է մինչև իր՝ որպես Արբիտրաժային խորհրդի անդամի լիազորությունների դադարումը: Արբիտրաժային խորհրդի նախագահը կարող է դադարեցնել Ազգային հանձնաժողովի նախագահի լիազորությունները՝ առանց Ազգային հանձնաժողովի կազմից անձին հեռացնելու, եթե նա նման դիմում է ներկայացրել Արբիտրաժային խորհրդի նախագահին, ինչպես նաև բացառիկ դեպքերում, երբ Ազգային

հանձնաժողովի նախագահը պատշաճ չի կատարում իր գործառույթների իրականացումը:

58. Արբիտրաժային խորհրդի, ներառյալ՝ դրա Ազգային հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են, համապատասխանաբար, Արբիտրաժային խորհրդի կամ դրա Ազգային հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին: Արբիտրաժային խորհրդի, ներառյալ՝ դրա Ազգային հանձնաժողովի որոշումները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

59. Արբիտրաժային խորհրդի գործունեության կարգով կարող են նախատեսվել հարցեր, որոնց կապակցությամբ սահմանվում է Արբիտրաժային խորհրդի, ներառյալ՝ դրա Ազգային հանձնաժողովի նիստի քվորման առավել մեծ թիվ կամ որոշումների ընդունման համար անհրաժեշտ ձայների առավել մեծ քանակ:

60. Արբիտրաժային խորհրդի նախագահը սեփական նախաձեռնությամբ կամ Ազգային հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ կարող է որոշում կայացնել Ազգային հանձնաժողովի իրավասությանը վերապահված հարցի քննարկմանն ու որոշման կայացմանը Ազգային հանձնաժողովի կազմից դուրս Արբիտրաժային խորհրդի այլ անդամներ ներգրավելու մասին:

IX. ՏՆՕՐԵՆԸ

61. Կենտրոնի Տնօրենի իրավասությանն են պատկանում Կենտրոնի ընթացիկ գործունեության ղեկավարման բոլոր հարցերը: Տնօրենը՝

1) կազմակերպում է Հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը.

2) տնօրինում է Կենտրոնի գույքը այդ, թվում՝ ֆինանսական միջոցները՝ Հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված գույքի տնօրինման կարգով,

3) ներկայացնում է Կենտրոնը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

4) գործում է առանց լիազորագրի.

5) տալիս է լիազորագրեր.

6) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

7) բանկերում բացում է հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

8) Հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կենտրոնի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և Կենտրոնի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Կենտրոնի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Կենտրոնի աշխատողներին.

11) Կենտրոնի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

12) հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին.

13) իրականացնում է Կենտրոնի արբիտրաժային կանոններով արբիտրաժային հաստատության գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունները (հանդես է գալիս որպես գլխավոր քարտուղար) և կազմակերպում է քարտուղարության աշխատանքները.

14) ապահովում է Հոգաբարձուների խորհրդին և Արբիտրաժային խորհրդին գործունեության կազմակերպման տեխնիկական և այլ անհրաժեշտ միջոցներով:

62. Կենտրոնի Տնօրենը այլ կազմակերպություններում կարող է զբաղեցնել վճարովի պաշտոններ միայն Հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ, բացառությամբ գիտական, ստեղծագործական և մանկավարժական գործունեության:

X. ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

63. Կենտրոնի վերակազմակերպումը կատարվում է միայն հիմնադիրների միաձայն որոշմամբ կամ Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

64. Կենտրոնը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա:

65. Կենտրոնը կարող է լուծարվել, եթե՝

1) Կենտրոնի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

2) Կենտրոնն իր գործունեությամբ շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

3) հնարավոր չէ հասնել Կենտրոնի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ.

4) Կենտրոնի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

5) Կենտրոնը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

6) Կենտրոնը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ.

7) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ դեպքերում:

66. Կենտրոնի լուծարումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

67. Կենտրոնի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Կենտրոնը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է Կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

68. Կենտրոնի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն
ք. Երևան, Արշակունյաց պող. 51, 47 տարածք
0026, Երևան, Հայաստան

+374-11-201-410 info@amca.am www.amca.am